

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ «ՀԵԻՔ»-Ը ՍԿՍԱԾ Է

Posted on November 10, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



“Մենք Ենք՝ Մեր Ցաւերը” ՇարքԷն

Պարոյր Աղպաշեան, ՊԵՂՈՒԹ, 10 Նոյեմբեր 2011



Ամիսներ առաջ, աւելի դիպուկ՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան ընդարձակեալ նիստին, երբ առաջադրուեցաւ գործող Նախագահ Սերժ Սարգսեանի Նախագահական թեկնածութիւնը (երկրորդ շրջանի մը համար), արդէն Նախօրօք գրած էինք՝ “այլ ընտրանք” չկայ, բացի *ինքնավերանորոգումի* տարբերակէն:

“Մենք Ենք՝ Մեր Ցաւերը” ՇարքԷն

Պարոյր Աղպաշեան, ՊԵՂՈՒԹ, 10 Նոյեմբեր 2011



Ամիսներ առաջ, աւելի դիպուկ՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան ընդարձակեալ նիստին, երբ առաջադրուեցաւ գործող Նախագահ Սերժ Սարգսեանի Նախագահական թեկնածութիւնը (երկրորդ շրջանի մը համար), արդէն Նախօրօք գրած էինք՝ “այլ ընտրանք” չկայ, բացի *ինքնավերանորոգումի* տարբերակէն:

Ինչո՞ւ այդ հաստատումը, օրի՛ն:

Սերժ Սարգսեան, իր Նախագահ ընտրուելէն ետք, առաջին իսկ օրէն արդէն ինքզինք Նախագահ կը նկատեր... Երկրորդ շրջանի մը համար, իսկ աստիկա յաջողեցնելու համար, դիմեց հետեւեալ միջոցներուն.

ա) Ամէն տեղ, ի մասնաւորի *զգայուն* ու *պատասխանատու* պաշտօններու վրայ զետեղեց *վստահելի* իւրայիններ (կուսակիցներ թէ բարեկամներ), չվարանելով, ի հարկին, զանոնք պաշտօնանկ ընելու կամ պաշտօնանկութեան մղելու, երբ տեսներ կամ զգար անոնց շեղումը իր գիծէն կամ խնկարկումը այլոց:

բ) Իրեն մրցակիցներէն շատեր, չեզոքացնելու կամ սիրաշահելու համար, պաշտօններ, հանգամանքներ ու դիրքեր “բաշխեց” (որոնց մէջ առանձնակի օրինակ մըն է Օրինաց Երկիր Կուսակցութեան Նախագահ Արթուր Բաղդասարեանը), ինքզինք աւելի ապահով ու կայուն զգալու համար:

գ) Գրեթէ ամենօրեայ յաճախականութեամբ, այցելութիւններ տուաւ խայտաբղետ կեդրոններ, իր ներկայութիւնն ու հոգատարութիւնը զգացնելու միտումով (սակայն, քիչ արդիւնաւետութեամբ ու նպաստաւորութեամբ):

դ) Տարբեր բնագաւառներու ու մարզերու անուանի (եւ ո՞չ-անուանի)

անձնաւորութիւններու վրայ տեղացուց շքանշաններու ու պարգէններու (գլխապտոյտ պատճառող) տարափ մը, առ որ անկ է հասկցնելու իր գնահատող եւ արժեւորող ըլլալու բացառութիւնը:

ե) Արտաքին յարաբերութիւններ հաստատելու կամ վերանորոգելու միտումով, բոլորին հետ լաւ ըլլալու, բոլորէն կարելորուելու յատուկ ճիգ մը ցուցաբերեց:

Այս բոլորէն աւելի, սակայն, Սարգսեանի վերադարձը, ի վաղուց անտի, նշմարելի էր (ու է), երբ գործեց ու կը գործէ նախագահական *բացարձակատիրութեամբ*, խորհրդարանական ու կառավարական կառոյցները շրջանցելով, աւելին՝ իրեն ենթարկելով կամ իրմէ կախեալ պահելով գանոնք:

Իր առաջադրումէն ասդին, Սարգսեան նոր հեւքի մը մէջ է, ի լուր, օրինակի համար, Ռոպերթ Քոչարեանի մը հաւանական թեկնածութեան, որ արդէն “ուրուական”ի դերակատարութեամբ կը դեգերի ներսն ու դուրսը:

(Ի միջի այլոց, Քոչարեանի նախագահական պալատ հասնելու յաւակնութիւնը, պետք է *հիմնովին* բացառուի, շահ տ պարզ տրամաբանութեամբ, որ իր չարաբաստիկ նախագահութեան շրջանին, տեղի ունեցան *զոյգ սպանդներ*. 29 Հոկտեմբեր 1999ի եւ 1 Մարտ 2008ի, իսկ ասոնց “պատասխանատուութիւն”ը, այս կամ այն ձեւով, կ’իյնայ իր վզին...

Հայրենի ժողովուրդը պետք չէ մոռնայ այս *աննախընթաց* ու ցարդ *անպատիժ* մնացած յանցագործութիւնները եւ այդ հիմամբ ալ պետք է վերաբերուի այս թղթածրարին հետ):

Սերժ Սարգսեան. լա՛ւ կը ճանչնայ իր երբեմնի բարեկամ Ռոպերթը, որուն հետ երկա՛ր ճամբայ կտրած է ու գիտէ անոր խորամանկութիւնները, ծանօթ է անոր մեքենայութիւններուն, հետեւաբար, երբ նախագահական ընտրութիւնները մօտալուտ են, չի կրնար անտարբեր մնալ, չի կրնար ձեռնաձալ նստիլ անոր “շարժումներուն” նկատմամբ:

Որոշապէ՛ս, այս է տեղի ունեցողը Հայաստանի պետական շրջանակներուն մէջ՝ *պաշտօնափոխութեանց*, *պաշտօնակոչութեանց* եւ, զարմանալի պետք չէ ըլլայ, *պաշտօնանկութեանց* (այս մէկը “սովորական” ըլլալով անկախ Հայաստանի մէջ):

Հերքումները, ուրացումներն ու ժխտումները ո՛չ մէկ արժէք կամ արդարացում ունին, պատահածները ըլլալով “կենդանի իրականութիւններ”:

Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանի “բեմադրական յեղաշրջում”ը ուրիշ

Ի՞նչ ձեռով կը բացատրուի, երբ կը նշանակուի, Հանրապետական կուսակցութեան կողմէ, նախընտրական գործընթացի ու քարոզչութեան դեկավար:

Ասիկա չի՞ նշանակեր, թէ գործող նախագահը, մեղմ ըսած, օգտագործելով իր նախագահական իրաւասութիւններն ու լիազօրութիւնները, տենդագին լծուած է իր աթոռը պահելու, “կասկածելի”ները հեռացնելով, իսկ “վստահելի”ները՝ բարձրացնելով:

Յստակ է, որ Սարգսեան, իր այս միջոցառումներով, կը փորձէ “բաց պատուհաններն ու դռները” ոչ միայն փակել, այլեւ ամրացնել, հեզասահ անցումի մը հեռանկարով, որուն համար պատրաստ է ամեն մարտահրաւեր դիմագրաւելու:

*

Այս առիթով, առանց մասնաւորումներու, սակայն որոշակի դիտարկումներու արձանագրութեամբ, կ'արժէ, գէթ հպանցիկ, անդրադառնալ այն սփիւռքահայերուն ու սփիւռքահայ հատուածներուն, որոնք հայրենի իրականութեան մասին երբ կը խօսին, զայն կը շփոթեն նախագահասիրութեան կամ իշխանասիրութեան հետ, զայն նկատելով անհպելի եւ անմերձենալի: Այս զգացականութիւնը, որ երբեմն ոմանց մօտ կը հասնի հիւանդագին ստրկամտութեան, հետաքրքրական է, որո՞ւն՝ ի՞նչ նպաստ կը բերէ կամ որո՞ւն հայրենասիրութիւնը կ'աւելցնէ եւ որո՞ւնը՝ կը պակսեցնէ:

Այս երեւոյթը աւելի ցուցադրական ու տեսողական է մանաւանդ անոնց մօտ, որոնք *անհրապաշտական եւ մակերեսայնական* “թրթիռ”ներով կը մօտենան հայրենի իրականութեան, մերժելով (կամ չտեսնելով) *տառակայական եւ ախտվատական* երեսները տիրող կացութեան, որոնք իր “սեւ ու ճերմակ”, “մուգ ու լոյս” գոյներով արդէն իսկ կան:

Փոխադարձաբար, հայրենի որոշ այրեր, գիտնալով սփիւռքէն եկած ու հնչած այս (դիւրաբեկ) տրամադրութիւնները, ըստ այնմ կը վերաբերուին անոնց հետ, այնքան ատեն որ “շքանշան”ները կը խօսին, կը յամենան, կը զրնգան, կը բոցկլտան, կը բոցավառեն ու... կը բոցավառուին:

